

ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

ՀԽՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության պետ

(1981-1988թթ.)

Ստեփան Գրիգորի Մութաֆյանը ծնվել է 1928թ. մայիսի 27-ին՝ Հայաստանի ԽՍՀ Լենինական քաղաքում:

1947թ. ընդունվել է Երևանի պոլիտխնիկական ինտիտուտի մեխանիկական ֆակուլտետը:

1949թ. ուսումը շարունակելու նպատակով տեղափոխվել է Լենինգրադ քաղաքի Կալինինի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, որն ավարտելուց հետո, աշխատել է նույն քաղաքի «Արդմեխանիզացիա» տրեստի նախագծային բաժնում:

1960թ. տեղափոխվել է ք.Երևան և «Հայհիդրոգունմետաղ» ինստիտուտում աշխատել որպես նախագծային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետ, ապա արդեն տեխնիկական բաժնի պետ:

1966թ. նշանակվել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մոնտաժային և հատուկ շինարարական աշխատանքների գլխավոր վարչության պետի տեղակալ, իսկ 1975թ. նույն վարչությունում՝ որպես պետի տեղակալ:

1978թ. նշանակվել է ՀԽՍՀ գազաֆիկացիայի գլխավոր վարչության պետ:

1979թ. նշանակվել է ՀԽՍՀ կոմունիստական կուսակցության կենտկոմի շինարարական բաժնի վարիչ:

1980թ. ընտրվել է ՀԽՍՀ գերագույն խորհրդի պատգամավոր, իսկ 1981- 1988թթ.-ին՝ ՀԽՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության պետ, որից հետո անցել է վաստակած կեսաթոշակի:

Ստեփան Մութաֆյանը վախճանվել է 2002 թվականին: